ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՐԹԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 192-Ա

Արթիկ համայնք 17 դեկտեմբերի 2025 թվական

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՐԹԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2025 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 17-Ի ԵՐԿՐՈՐԴ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ մասով և Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի ավագանու 2021թվականի դեկտեմբերի 30-ի թիվ 85-Ն որոշմամբ հաստատված կանոնակարգի 107-րդ կետի 3-րդ ենթակետով, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի ավագանին

ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Հայաստանի Հանրապետությունում ագրոպարենային ոլորտի սարքավորումների լիզինգի աջակցության ծրագրին Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի կողմից մասնակցության հայտ ներկայացնելու առաջարկությանը համաձայնություն տալու մասին:
   /զեկուցող՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի ավագանու անդամ Մեսրոպ Վարագյան/
2. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի ավագանու 2024 թվականի դեկտեմբերի 23-ի թիվ 245-ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին:
   /զեկուցող՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի ավագանու անդամ Մեսրոպ Վարագյան/
3. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի 2026թվականի համար տեղական տուրքերի և վճարների տեսակներն ու դրույքաչափերը սահմանելու մասին:
   /զեկուցող՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի ավագանու անդամ Մեսրոպ Վարագյան/
4. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի սեփականություն հանդիսացող ընդերքօգտագործման հողամասերը վարձակալության տրամադրման վարձակալական վճարի չափ սահմանելու մասին:
   /զեկուցող՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի ավագանու անդամ Մեսրոպ Վարագյան/
5. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի կողմից ֆիզիկական անձանց մատուցվող աղբահանության ծառայության դիմաց նախատեսված աղբահանության վճարների տույժերի նկատմամբ արտոնություն կիրառելու մասին:
   /զեկուցող՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի ավագանու անդամ Մեսրոպ Վարագյան/

6. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի ավագանու 2024 թվականի դեկտեմբերի 16-ի N 236-ն որոշման 4-րդ մասը ուժը կորցրած ճանաչելու և Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի նախադպրոցական ուսումնական հաստատությունների 2026 թվականին հաճախող մեկ սանի մեկ օրվա սննդի կազմակերպման համար տրամադրվող միջին գումարի չափ սահմանելու մասին:
/զեկուցող՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի ավագանու անդամ Մեսրոպ Վարագյան/
7. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի Տուֆաշեն բնակավայրի վարչական սահմաններում նախատեսվող Արթիկի հրաբխային տուֆերի հանքավայրի «Տուֆածոր» տեղամասում երկրաբանական ուսումնասիրության աշխատանքներին նախնական համաձայնություն տալու մասին:
/զեկուցող՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի ավագանու անդամ Մեսրոպ Վարագյան/
8. Հանրապետության Շիրակի մարզի Արթիկի համայնքապետարանի կարիքների համար կազմակերպված <<ՇՄԱՀ-ՀՄԱՊՁԲ-25/95>> ծածկագրով գնման ընթացակարգը չեղյալ համարելու մասին:
/զեկուցող՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի ավագանու անդամ Մեսրոպ Վարագյան/

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի ավագանու անդամներ

Կողմ (14)	**Դեմ (0)**	**Ձեռնպահ (0)**
Թովմասյան		
Մարտիրոսյան		
Աղրամանյան		
Բաղդասարյան		
Գևորգյան		
Հովհաննիսյան		
Պետրոսյան		
Գևորգյան		
Սահակյան		
Մինասյան		
Վարդանյան		
Մկրտչյան		
Վարագյան		
Ասատրյան		

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ
ԱՐԹԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ա.ՈՍԿԱՆՅԱՆ

Կ. Տ.
Հայաստանի Հանրապետության
Շիրակի մարզ, Արթիկ համայնք
2025 թվականի դեկտեմբերի 17

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՐԹԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 193-Ա

Արթիկ համայնք 17 դեկտեմբերի 2025թվական

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԱԳՐՈՊԱՐԵՆԱՅԻՆ ՈԼՈՐՏԻ ՍԱՐՔԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ ԼԻԶԻՆԳԻ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՐԹԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԿՈՂՄԻՑ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ ՀԱՅՏ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 13-րդ կետով, 18-րդ հոդվածի 1-ին մասի 25-րդ կետով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2018 թվականի հուլիսի 19-ի N 893-Լ որոշումը, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի ավագանին

ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Համաձայնություն տալ Հայաստանի Հանրապետությունում ագրոպարենային ոլորտի սարքավորումների լիզինգի աջակցության ծրագրով մոդուլային սպանդանոցի ֆինանսական վարձակալությամբ ձեռք բերելու վերաբերյալ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի ղեկավարի առաջարկությանը:
2. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի 2025 թվականի բյուջեից կատարել կանխավճար լիզինգի առարկայի արժեքի 20%-ի չափով:
3. Լիզինգի առարկայի արժեքը կազմում է 49, 939 998,00 Հայաստանի Հանրապետության դրամ, որից կանխավճարի գումարը կազմում է 9 879 999,60 Հայաստանի Հանրապետության դրամ:
4. Սպանդանոցի համար 2026-2031 թվականների ընթացքում յուրաքանչյուր տարվա համար համայնքի բյուջեում նախատեսել առնվազն լիզինգի գծով վարձավճարների չափով ծախսային համապատասխան հոդված՝ պահպանելով «Բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 30-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջները:
5. Լիզինգի վարձավճարների վճարումները նախատեսել յուրաքանչյուր տարի ապրիլ-դեկտեմբեր ամիսներին:
6. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակման օրը:

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի ավագանու անդամներ

Կողմ (14)	**Դեմ (0)**	**Ձեռնպահ (0)**
Թովմասյան		
Մարտիրոսյան		
Աղրամանյան		
Բաղդասարյան		
Գևորգյան		
Հովհաննիսյան		
Պետրոսյան		
Գևորգյան		

Սահակյան
Մինասյան
Վարդանյան
Մկրտչյան
Վարագյան
Ասատրյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ
ԱՐԹԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ա.ՈՍԿԱՆՅԱՆ

Կ. Տ.
Հայաստանի Հանրապետության
Շիրակի մարզ, Արթիկ համայնք
2025 թվականի դեկտեմբերի 17

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՐԹԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 194-Ն

Արթիկ համայնք 17 դեկտեմբերի 2025 թվական

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՐԹԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2024 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 23-Ի ԹԻՎ 245-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով, 83-րդհոդվածի 2-րդմասով, 90 րդհոդվածի 1-ին և 6-րդ մասերով, «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 29-րդ հոդվածի 1-ին և 5-րդ մասերով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդհոդվածի 1-ին մասի 1-ին կետով, 34-րդ հոդվածի 1-ին, 2-րդ և 3-րդմասերով, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի ավագանին

ՈՐՈՇՈՒՄ Է՝

1.ՀայաստանիՀանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի ավագանու 2024 թվականի դեկտեմբերի 23-ի «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկհամայնքի 2025 թվականի բյուջեն հաստատելու մասին» թիվ 245-Նորոշման մեջ բյուջեի ծախսային մասում կատարել հետևյալ փոփոխությունները.

1) Օրենսդիր և գործադիր մարմիններ, պետական կառավարում 01.1.1 դասակարգմամբ «Պարգևատրումներ, դրամական խրախուսումներ և հատուկ վճարներ» 4112 հոդվածում գրված «50000000 հիսուն միլիոն» թիվը և բառերը փոխարինել «77000000 յոթանասունյոթ միլիոն» թվով և բառերով:

2) Նախադպրոցական կրթություն բաժնի 09.1.1 դասակարգմամբ

ա/ «Սուբսիդիաներ ոչ-ֆինանսական պետական (համայնքային) կազմակերպություններին» 4511 հոդվածում գրված «677869900 վեց հարյուր յոթանասունյոթ միլիոն ութ հարյուր վաթսունինը հազար ինը հարյուր» թիվը և բառերը փոխարինել «691584900 վեց հարյուր իննսունմեկ միլիոն հինգ հարյուր ութսունչորս հազար ինը հարյուր» թվով և բառերով: Այդ թվում «Արթիկի թիվ 3 մանկապարտեզ» համայնքային ոչ առևտրային կազմակերպություն տողի «Սուբսիդիաներ ոչ-ֆինանսական պետական (համայնքային) կազմակերպություններին» 4511 հոդվածում գրված «58851100 հիսունութ միլիոն ութ հարյուր հիսունմեկ հազար մեկ հարյուր» թիվը և բառերը փոխարինել «61297100 վաթսունմեկ միլիոն երկու հարյուր իննսունյոթ հազար մեկ հարյուր» թվով և բառերով, «Արթիկի թիվ 4 մանկապարտեզ» համայնքային ոչ առևտրային կազմակերպություն տողի «Սուբսիդիաներ ոչ-ֆինանսական պետական (համայնքային) կազմակերպություններին» 4511 հոդվածում գրված «52204000 հիսուներկու միլիոն երկու հարյուր չորս հազար» թիվը և բառերը փոխարինել «52754000 հիսուներկու միլիոն յոթ հարյուր հիսունչորս հազար» թվով և բառերով, «Հառիճի մանկապարտեզ» համայնքային ոչ առևտրային կազմակերպություն տողի «Սուբսիդիաներ ոչ-ֆինանսական պետական (համայնքային) կազմակերպություններին» 4511 հոդվածում գրված «32352000 երեսուներկու միլիոն երեք

հարյուր հիսուներկու հազար» թիվը և բառերը փոխարինել «33407000 երեսուներեք միլիոն չորս հարյուր յոթ հազար» թվով և բառերով, «Փանիկի նախադպրոցական ուսումնական հաստատություն» համայնքային ոչ առևտրային կազմակերպություն տողի «Սուբսիդիաներ ոչ-ֆինանսական պետական (համայնքային) կազմակերպություններին» 4511 հոդվածում գրված «49445400 քառասունինը միլիոն չորս հարյուր քառասունհինգ հազար չորս հարյուր» թիվը և բառերը փոխարինել «52864400 հիսուներկու միլիոն ութ հարյուր վաթսունչորս հազար չորս հարյուր» թվով և բառերով, «Գեղանիստի նախադպրոցական ուսումնական հաստատություն» համայնքային ոչ առևտրային կազմակերպություն տողի «Սուբսիդիաներ ոչ-ֆինանսական պետական (համայնքային) կազմակերպություններին» 4511 հոդվածում գրված «32460100 երեսուներկու միլիոն չորս հարյուր վաթսուն հազար մեկ հարյուր» թիվը և բառերը փոխարինել «33542100 երեսուներեք միլիոն հինգ հարյուր քառասուներկու հազար մեկ հարյուր» թվով և բառերով, «Պեմզաշենի նախադպրոցական ուսումնական հաստատություն» համայնքային ոչ առևտրային կազմակերպություն տողի «Սուբսիդիաներ ոչ-ֆինանսական պետական (համայնքային) կազմակերպություններին» 4511 հոդվածում գրված «34852000 երեսունչորս միլիոն ութ հարյուր հիսուներկու հազար» թիվը և բառերը փոխարինել «39957000 երեսունինը միլիոն ինը հարյուր հիսունյոթ հազար» թվով և բառերով, «Անուշավանի Արշակ Տոնոյանի անվան նախադպրոցական ուսումնական հաստատություն» համայնքային ոչ առևտրային կազմակերպություն տողի «Սուբսիդիաներ ոչ-ֆինանսական պետական (համայնքային) կազմակերպություններին» 4511 հոդվածում գրված «41292100 քառասունմեկ միլիոն երկու հարյուր իննսուներկու հազար մեկ հարյուր» թիվը և բառերը փոխարինել «41350100 քառասունմեկ միլիոն երեք հարյուր հիսուն հազար մեկ հարյուր» թվով և բառերով:

բ/ «Շենքերի և շինությունների կապիտալ վերանորոգում» 5113 հոդվածում գրված «86519500 ութանասունվեց միլիոն հինգ հարյուր տասնինը հազար հինգ հարյուր» թիվը և բառերը փոխարինել «63239500 վաթսուներեք միլիոն երկու հարյուր երեսունինը հազար հինգ հարյուր» թվով և բառերով:

3) Արտադպրոցական դաստիարակություն բաժնի 09.5.1 դասակարգմամբ «Սուբսիդիաներ ոչ-ֆինանսական պետական (համայնքային) կազմակերպություններին» 4511 հոդվածում գրված «333835000 երեք հարյուր երեսուներեք միլիոն ութ հարյուր երեսունհինգ հազար» թիվը և բառերը փոխարինել «345464000 երեք հարյուր քառասունհինգ միլիոն չորս հարյուր վաթսունչորս հազար» թվով և բառերով: Այդ թվում «Պեմզաշենի արվեստի դպրոց» համայնքային ոչ առևտրային կազմակերպություն տողի «Սուբսիդիաներ ոչ-ֆինանսական պետական (համայնքային) կազմակերպություններին» 4511 հոդվածում գրված «29447000 քսանինը միլիոն չորս հարյուր քառասունյոթ հազար» թիվը և բառերը փոխարինել «30538000 երեսուն միլիոն հինգ հարյուր երեսունութ հազար» թվով և բառերով, «Անուշավանի Սուրեն Սոսյանի անվան արվեստի դպրոց» համայնքային ոչ առևտրային կազմակերպություն տողի «Սուբսիդիաներ ոչ-ֆինանսական պետական (համայնքային) կազմակերպություններին» 4511 հոդվածում գրված «16002000 տասնվեց միլիոն երկու հազար» թիվը և բառերը փոխարինել «16802000 տասնվեց միլիոն ութ հարյուր երկու հազար» թվով և բառերով, «Գեղարվեստի դպրոց» համայնքային ոչ առևտրային կազմակերպություն տողի «Սուբսիդիաներ ոչ-ֆինանսական պետական (համայնքային) կազմակերպություններին» 4511 հոդվածում գրված «23007000 քսաներեք միլիոն յոթ հազար» թիվը և բառերը փոխարինել «24007000 քսանչորս միլիոն յոթ հազար» թվով և բառերով, «Արթիկի մարզադպրոց» համայնքային ոչ առևտրային կազմակերպություն տողի «Սուբսիդիաներ ոչ-ֆինանսական պետական (համայնքային) կազմակերպություններին» 4511 հոդվածում գրված «32682000 երեսուներկու միլիոն վեց հարյուր ութսուներկու հազար» թիվը և բառերը փոխարինել «35080000 երեսունհինգ միլիոն ութսուն հազար» թվով և բառերով, «Արթիկի մարզահամալիր» համայնքային ոչ առևտրային կազմակերպություն

տողի «Սուբսիդիաներ ոչ-ֆինանսական պետական (համայնքային) կազմակերպություններին» 4511 հոդվածում գրված «39892000 երեսունինը միլիոն ութ հարյուր իննսուներկու հազար» թիվը և բառերը փոխարինել «44232000 քառասունչորս միլիոն երկու հարյուր երեսուներկու հազար» թվով և բառերով, «Արթիկի ֆուտբոլի մարզադպրոց» համայնքային ոչ առևտրային կազմակերպություն տողի «Սուբսիդիաներ ոչ-ֆինանսական պետական (համայնքային) կազմակերպություններին» 4511 հոդվածում գրված «31587000 երեսունմեկ միլիոն հինգ հարյուր ութսունյոթ հազար» թիվը և բառերը փոխարինել «33587000 երեսուներեք միլիոն հինգ հարյուր ութսունյոթ հազար» թվով և բառերով:

4) Մշակույթի տներ, ակումբներ, կենտրոններ բաժնի 08.2.3 դասակարգմամբ «Սուբսիդիաներ ոչ-ֆինանսական պետական (համայնքային) կազմակերպություններին» 4511 հոդվածում գրված «92202000 իննսուներկու միլիոն երկու հարյուր երկու հազար» թիվը և բառերը փոխարինել «96632000 իննսունվեց միլիոն վեց հարյուր երեսուներկու հազար» թվով և բառերով: Այդ թվում «Արթիկի Վարազ Սամուելյանի մշակույթի տուն» համայնքային ոչ առևտրային կազմակերպություն տողի «Սուբսիդիաներ ոչ-ֆինանսական պետական (համայնքային) կազմակերպություններին» 4511 հոդվածում գրված «24462000 քսանչորս միլիոն չորս հարյուր վաթսուներկու հազար» թիվը և բառերը փոխարինել «26162000 քսանվեց միլիոն մեկ հարյուր վաթսուներկու հազար» թվով և բառերով, «Արթիկի Տիգրան Մանսուրյանի անվան մշակույթի կենտրոն» համայնքային ոչ առևտրային կազմակերպություն տողի «Սուբսիդիաներ ոչ-ֆինանսական պետական (համայնքային) կազմակերպություններին» 4511 հոդվածում գրված «67740000 վաթսունյոթ միլիոն յոթ հարյուր քառասուն հազար» թիվը և բառերը փոխարինել «70470000 յոթանասուն միլիոն չորս հարյուր յոթանասուն հազար» թվով և բառերով:

5) Գրադարաններ բաժնի 08.2.1 դասակարգմամբ «Սուբսիդիաներ ոչ-ֆինանսական պետական (համայնքային) կազմակերպություններին» 4511 հոդվածում գրված «46735000 քառասունվեց միլիոն յոթ հարյուր երեսունհինգ հազար» թիվը և բառերը փոխարինել «49529000 քառասունինը միլիոն հինգ հարյուր քսանինը հազար» թվով և բառերով:

6) Շրջակա միջավայրի պաշտպանություն (այլ դասերին չպատկանող) բաժնի 05.6.1 դասակարգմամբ «Սուբսիդիաներ ոչ-ֆինանսական պետական (համայնքային) կազմակերպություններին» 4511 հոդվածում գրված «274000000 երկու հարյուր յոթանասունչորս միլիոն» թիվը և բառերը փոխարինել «301000000 երեք հարյուր մեկ միլիոն» թվով և բառերով:

7) Փողոցների լուսավորում բաժնի 06.4.1 դասակարգմամբ «Սուբսիդիաներ ոչ-ֆինանսական պետական (համայնքային) կազմակերպություններին» 4511 հոդվածում գրված «15200000 տասնհինգ միլիոն երկու հարյուր հազար» թիվը և բառերը փոխարինել «15950000 տասնհինգ միլիոն ինը հարյուր հիսուն հազար» թվով և բառերով:

8) Ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ /այլ դասերին չպատկանող/ բաժնի 01.6.1 դասակարգմամբ

ա/ «Այլ մեքենաներ և սարքավորումներ» 5129 հոդվածում գրված «0 զրո» թիվը և բառը փոխարինել «13400000 տասներեք միլիոն չորս հարյուր հազար» թվով և բառերով: /Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի 23 բնակավայրերի համար տոնածառների ձեռք բերում/:

բ/ «Ներքին գործուղումներ» 4221 հոդվածում գրված «10307400 տաս միլիոն երեք հարյուր չորս հարյուր» թիվը և բառերը փոխարինել «13307400 տասներեք միլիոն երեք հարյուր յոթ հազար չորս հարյուր» թվով և բառերով:

գ/ «Մասնագիտական ծառայություններ» 4241 հոդվածում գրված «28000000 քսանութ միլիոն» թիվը և բառերը փոխարինել «25000000 քսանհինգ միլիոն» թվով և բառերով:

9) Այլ մշակութային կազմակերպություններ բաժնի 08.2.4 դասակարգմամբ «Ընդհանուր բնույթի այլ ծառայություններ» 4239 հոդվածում գրված «16000000 տասնվեց միլիոն» թիվը և բառերը փոխարինել «17662000 տասնյոթ միլիոն վեց հարյուր վաթսուներկու հազար» թվով և բառերով: /ՀՀ Շիրակի մարզի Արթիկ համայնքի Արթիկ քաղաքի գլխավոր տոնածառի տեղադրման, ապրանքների ձեռք բերման և հարակից տարածքների զարդարման ծառայություն - 10885000 (տաս միլիոն ութ հարյուր ութսունհինգ հազար) Հայաստանի Հանրապետության դրամ/:

10) Գյուղատնտեսություն բաժնի 04.2.1 դասակարգմամբ «Այլ մեքենաներ և սարքավորումներ» 5129 հոդվածում գրված «0 զրո» թիվը և բառը փոխարինել «9880000 ինը միլիոն ութ հարյուր ութսուն հազար» թվով և բառերով: /Հայաստանի Հանրապետության ագրոպարենային ոլորտի սարքավորումների լիզինգի աջակցության ծրագրով մոդուլային սպանդանոցի ֆինանսական վարձակալությամբ ձեռք բերելու համար կանխավճար՝ 20 %/:

11) Հայաստանի Հանրապետության համայնքների պահուստային ֆոնդ բաժնի 11.1.2 դասակարգմամբ «Պահուստային միջոցներ» (4891) հոդվածում գրված «345469800 երեք հարյուր քառասունհինգ միլիոն չորս հարյուր վաթսունինը հազար ութ հարյուր» թիվը և բառերը փոխարինել «256489800 երկու հարյուր հիսունվեց միլիոն չորս հարյուր ութսունինը հազար ութ հարյուր» թվով և բառերով:

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի ավագանու անդամներ

Կողմ (14)	**Դեմ (0)**	**Ձեռնպահ (0)**
Թովմասյան		
Մարտիրոսյան		
Աղրամանյան		
Բաղդասարյան		
Գևորգյան		
Հովհաննիսյան		
Պետրոսյան		
Գևորգյան		
Սահակյան		
Մինասյան		
Վարդանյան		
Մկրտչյան		
Վարագյան		
Ասատրյան		

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ

ԱՐԹԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ա.ՈՍԿԱՆՅԱՆ

Կ. Տ.

Հայաստանի Հանրապետության
Շիրակի մարզ, Արթիկ համայնք
2025 թվականի դեկտեմբերի 17

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՐԹԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 195-Ն

Արթիկ համայնք 17 դեկտեմբերի 2025թվական

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՐԹԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ 2026 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ՏԵՍԱԿՆԵՐՆ ՈՒ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական տուրքերի և վճարների մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 8-րդ, 9-րդ, 10-րդ, 11-րդ, 12-րդ, 13-րդ, 14-րդ, 15-րդ հոդվածներով, <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 18-րդ,18.1-րդ 19-րդ կետերով, 88-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերով, <<Ավտոտրանսպորտային միջոցների կայանատեղերի տեղական վճարի և վարչական վարույթի առանձնահատկությունների մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ հոդվածի 1-ին մասով, <<Աղբահանության և սանիտարական մաքրման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 8-րդ և 14-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի ավագանին

ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Սահմանել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի 2026 թվականի համար տեղական տուրքերի և վճարների տեսակներն ու դրույքաչափերը՝ համաձայն հավելված 1-ի և 2-ի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2026թվականի հունվարի 1-ից:

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի ավագանու անդամներ

Կողմ (14)	**Դեմ (0)**	**Ձեռնպահ (0)**
Թովմասյան		
Մարտիրոսյան		
Աղրամանյան		
Բաղդասարյան		
Գևորգյան		
Հովհաննիսյան		
Պետրոսյան		
Գևորգյան		
Սահակյան		
Մինասյան		
Վարդանյան		

Մկրտչյան
Վարագյան
Ասատրյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ
ԱՐԹԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ա.ՈՍԿԱՆՅԱՆ

Կ. Տ.
Հայաստանի Հանրապետության
Շիրակի մարզ, Արթիկ համայնք
2025 թվականի դեկտեմբերի 17

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՐԹԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 196-Ն

Արթիկ համայնք 17 դեկտեմբերի 2025թվական

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՐԹԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԸՆԴԵՐՔ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՀՈՂԱՄԱՍԵՐԸ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ՎԱՐՁԱԿԱԼԱԿԱՆ ՎՃԱՐԻ ՉԱՓ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 16-րդ և 24-րդ կետերով, Հայաստանի Հանրապետության <<Հողային օրենսգրքի>> 13-րդ հոդվածի 6-րդ մասով, 48-րդ հոդվածի 1-ին մասով, 76-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերով, և 81-րդ հոդվածի 3-րդ մասով՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի ավագանին

ՈՐՈՇՈՒՄ Է

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի սեփականություն հանդիսացող արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության նպատակային նշանակության ընդերքի օգտագործման գործառնական նշանակության հողամասերի վարձակալության տրամադրման մեկ հեկտարի տարեկան վարձակալական վճարի չափ սահմանել /100 000/ մեկ հարյուր հազար/ Հայաստանի Հանրապետության դրամ:
2. Գումարը վճարվում է յուրաքանչյուր եռամսյակի վերջին ամսվա մինչև 25-ը:

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի ավագանու անդամներ

Կողմ (14)	**Դեմ (0)**	**Ձեռնպահ (0)**
Թովմասյան		
Մարտիրոսյան		
Աղրամանյան		
Բաղդասարյան		
Գևորգյան		
Հովհաննիսյան		
Պետրոսյան		

Գևորգյան
Սահակյան
Մինասյան
Վարդանյան
Մկրտչյան
Վարագյան
Ասատրյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ
ԱՐԹԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ա.ՈՍԿԱՆՅԱՆ

Կ. Տ.
Հայաստանի Հանրապետության
Շիրակի մարզ, Արթիկ համայնք
2025 թվականի դեկտեմբերի 17

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՐԹԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 197-Ն

Արթիկ համայնք 17 դեկտեմբերի 2025թվական

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՐԹԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԿՈՂՄԻՑ ՖԻԶԻԿԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՄԱՏՈՒՑՎՈՂ ԱՂԲԱՀԱՆՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԴԻՄԱՑ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ԱՂԲԱՀԱՆՈՒԹՅԱՆ ՎՃԱՐՆԵՐԻ ՏՈՒՅԺԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆ ԿԻՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Աղբահանության և սանիտարական մաքրման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի և «Տեղական տուրքերի և վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի ավագանին

ՈՐՈՇՈՒՄ Է

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի կողմից ֆիզիկական անձանց մատուցվող աղբահանության ծառայության դիմաց նախատեսված աղբահանության վճարները՝ Աղբահանության և սանիտարական մաքրման մասին Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված ժամկետում չվճարելու կամ այդ ժամկետից ուշ վճարելու դեպքում հաշվարկված տույժերի նկատմամբ կիրառել արտոնություն՝ սահմանված տույժերից ազատում:

2. Արտոնությունը կիրառել 2026թվականի ընթացքում մատուցվող ծառայությունների դիմաց նախատեսված վճարների համար Աղբահանության և սանիտարական մաքրման մասին Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված ժամկետում չվճարելու կամ այդ ժամկետից ուշ վճարելու դեպքում աղբահանության վարձավճարների հաշվարկման ծրագրային համակարգում աղբահանության բաժնում հաշվառված փաստաթղթերի և տեղեկությունների հիման վրա հաշվարկված տույժերի նկատմամբ:

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2026թվականի հունվարի մեկից:

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի ավագանու անդամներ

Կողմ (14)	**Դեմ (0)**	**Ձեռնպահ (0)**
Թովմասյան		
Մարտիրոսյան		
Աղրամանյան		
Բաղդասարյան		

Գևորգյան
Հովհաննիսյան
Պետրոսյան
Գևորգյան
Սահակյան
Մինասյան
Վարդանյան
Մկրտչյան
Վարագյան
Ասատրյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ
ԱՐԹԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ա.ՈՍԿԱՆՅԱՆ

Կ. Տ.
Հայաստանի Հանրապետության
Շիրակի մարզ, Արթիկ համայնք
2025 թվականի դեկտեմբերի 17

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՐԹԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 198-Ն

Արթիկ համայնք 17 դեկտեմբերի 2025թվական

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՐԹԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ 2026 ԹՎԱԿԱՆԻՆ ՀԱՃԱԽՈՂ ՄԵԿ ՍԱՆԻ ՄԵԿ ՕՐՎԱ ՍՆՆԴԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՀԱՄԱՐ ՏՐԱՄԱԴՐՎՈՂ ՄԻՋԻՆ ԳՈՒՄԱՐԻ ՉԱՓ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Նախադպրոցական կրթության մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 13-րդ հոդվածով, 28-րդ հոդվածի 5-րդ մասի 3-րդ կետով, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարի 05 մայիսի 2025 թվականի N 41-Ն հրամանով՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի ավագանին

ՈՐՈՇՈՒՄ Է

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի նախադպրոցական ուսումնական հաստատություններ 2026 թվականին հաճախող երկուսից մինչև երեք տարեկան սանի մեկ օրվա սննդի կազմակերպման համար հատկացնել միջինը /465/ չորս հարյուր վաթսունհինգ Հայաստանի Հանրապետության դրամ, իսկ երեք և բարձր տարիքի սաների համար՝ /600/ վեց հարյուր Հայաստանի Հանրապետության դրամ:
2. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում 2026 թվականի հունվարի 01-ից:

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի ավագանու անդամներ

Կողմ (14)	**Դեմ (0)**	**Ձեռնպահ (0)**
Թովմասյան		
Մարտիրոսյան		
Աղրամանյան		
Բաղդասարյան		
Գևորգյան		
Հովհաննիսյան		
Պետրոսյան		
Գևորգյան		
Սահակյան		
Մինասյան		

Վարդանյան
Մկրտչյան
Վարագյան
Ասատրյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ
ԱՐԹԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ա.ՈՍԿԱՆՅԱՆ

Կ. Տ.
Հայաստանի Հանրապետության
Շիրակի մարզ, Արթիկ համայնք
2025 թվականի դեկտեմբերի 17

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՐԹԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 199-Ա

Արթիկ համայնք 17 դեկտեմբերի 2025թվական

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՐԹԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՏՈՒՖԱՇԵՆ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ԱՐԹԻԿԻ ՀՐԱԲԽԱՅԻՆ ՏՈՒՖԵՐԻ ՀԱՆՔԱՎԱՅՐԻ «ՏՈՒՖԱՁՈՐ» ՏԵՂԱՄԱՍՈՒՄ ԵՐԿՐԱԲԱՆԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻՆ ՆԱԽՆԱԿԱՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետով, «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 11-րդ հոդվածի 1-ինկետի 1-ինենթա-կետով և 16-րդ հոդվածի 3-րդկետով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2014 թվականի նոյեմբերի 19-ի թիվ 1325-Ն որոշման(որոշումը խմբ. 28.12.2023 N 2343Ն) հավելվածի 28-րդ կետը և 28 նոյեմբերի 2025 թվականին կայացած հանրային լսումների արդյունքները՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի ավագանին

ՈՐՈՇՈՒՄ Է

1. «ՌՊՏ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կողմից ներկայացված Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի Տուֆաշեն բնակավայրի վարչական սահմաններում Արթիկի հրաբխային տուֆերի հանքավայրի Տուֆաձորի տեղամասում օգտակար հանածոյի արդյունահանման նպատակով նախատեսվող երկրաբանական ուսումնասիրություններ իրականացնելու աշխատանքներին տրամադրել նախնական համաձայնություն:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի ավագանու անդամներ

Կողմ (14)	**Դեմ (0)**	**Ձեռնպահ (0)**
Թովմասյան		
Մարտիրոսյան		
Աղրամանյան		

Բաղդասարյան
Գևորգյան
Հովհաննիսյան
Պետրոսյան
Գևորգյան
Սահակյան
Մինասյան
Վարդանյան
Մկրտչյան
Վարագյան
Ասատրյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԱՐԹԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ա.ՈՍԿԱՆՅԱՆ

Կ. Տ.
Հայաստանի Հանրապետության
Շիրակի մարզ, Արթիկ համայնք
2025 թվականի դեկտեմբերի 17

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻՄԱՐԶԻ ԱՐԹԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 200-Ա

Արթիկ համայնք 17 դեկտեմբերի 2025 թվական

ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՐԹԻԿԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԿԱԶՄԱԿԵՐՊՎԱԾ <<ՇՄԱՀ-ՀՄԱՊՁԲ-25/95>> ԾԱԾԿԱԳՐՈՎ ԳՆՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԸ ՉԵՂՅԱԼ ՀԱՄԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով, <<Գնումների մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշման 58-րդ կետով Շիրակի մարզի Արթիկ համայնքի ավագանին

ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկի համայնքապետարանի կարիքների համար ամանորյա սննդի ծանրոցների ձեռքբերման <<ՇՄԱՀ-ՀՄԱՊՁԲ-25/95>> ծածկագրով գնման ընթացակարգը ամբողջությամբ չեղյալ համարել գնման պահանջի դադարելու պատճառով:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում օրենքով սահմանված կարգով հրապարակման հաջորդող օրվանից:

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի ավագանու անդամներ

Կողմ (14)	**Դեմ (0)**	**Ձեռնպահ (0)**
Թովմասյան		
Մարտիրոսյան		
Աղրամանյան		
Բաղդասարյան		
Գևորգյան		
Հովհաննիսյան		
Պետրոսյան		
Գևորգյան		
Սահակյան		
Մինասյան		
Վարդանյան		
Մկրտչյան		

Վարագյան
Ասատրյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ
ԱՐԹԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ա.ՈՍԿԱՆՅԱՆ

Կ. Տ.
Հայաստանի Հանրապետության
Շիրակի մարզ, Արթիկ համայնք
2025 թվականի դեկտեմբերի 17